# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Ճամբարակ, 026522255, 026523133, 026561525,
chambarak.gegharquniq@mta.gov.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՄԱՅԻՍԻ 2014թվականի N 18-Ա

## ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21-Ի ՓՈՂՈՑԻ ՎԵՐՋՆԱՄԱՍԻ ԵՎ ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՎԵՐՋՆԱՄԱՍԻ ԱՆՎԱՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29.12.2005թ. N2387-Ն "ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում հասցեավորման և անվանափոխության կարգը հաստատելու մասին" որոշմամբ և հաշվի առնելով, որ Սարիբեկ Չիլինգարյանը Հայրենական Մեծ պատերազմի հերոս է, մեծ է նրա սխրանքը հայրենիքի հանդեպ, նաև հաշվի առնելով համայնքի բնակչության ցանկությունը, համայնքի ղեկավարը առաջարկեց Սեպտեմբերի 21-ի և Ավ.Իսահակյան փողոցների վերջնամասը անվանակոչել Սարիբեկ Չիլինգարյանի անվամբ.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ճամբարակ քաղաքի Սեպտեմբերի 21-ի փողոցի վերջնամասը և Ավ.Իսահակյան փողոցի վերջնամասը ընկած ճանապարհահատվածը անվանակոչել Հայրենական Մեծ պատերազմի հերոս Սարիբեկ Չիլինգարյանի անվամբ:
   /Ցուցակը կցում է/

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ – 9, դեմ-0, ձեռնպահ - 0

ՎԱԶԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ — ԹԱՐԽԱՆ ԽԵՉՈՅԱՆ

ՆՎԵՐ ԱՐԱՄՅԱՆ — ՆԱՐԻԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ԲԱԼՅԱՆ — ՍԵՎԱԿ ՍԵՎԱՆՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԼԱԶԱՐՅԱՆ — ՎԱՀԱԳՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ՍԱՐՈ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՅՈՒ. ԱՎԱԼՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Ճամբարակ, 026522255, 026523133, 026561525,
chambarak.gegharquniq@mta.gov.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՄԱՅԻՍԻ 2014թվականի N 17-Ա

### ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ՝ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ, ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել՝

1.Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակի քաղաքապետարանի Մանկապատանեկան Մարզադպրոցի կանոնադրությունը /կցվում է/:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակի քաղաքապետարանի կենտրոնական գրադարանի կանոնադրությունը /կցվում է/:

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակի քաղաքապետարանի Մշակույթի տան կանոնադրությունը /կցվում է/:

4. Սույն որոշուն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-9, դեմ-0, ձեռնպահ -0

ՎԱԶԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ ԹԱՐԽԱՆ ԽԵՉՈՅԱՆ

ՆՎԵՐ ԱՐԱՄՅԱՆ ՆԱՐԻԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ԲԱԼՅԱՆ ՍԵՎԱԿ ՍԵՎԱՆՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԼԱԶԱՐՅԱՆ ՎԱՀԱԳՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ՍԱՐՈ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏ Յու.ԱՎԱԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Ճամբարակ, 026522255, 026523133, 026561525,
chambarak.gegharquniq@mta.gov.

# Ո Ր Ո Շ Ու Մ

19 ՄԱՅԻՍԻ 2014թվականի N 16-Ա

## ԹԻՎ 3 Մ/ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ԵՎ ԹԻՎ 5 Ն/ՀԻՄՆԱՐԿ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԾՆՈՂԱԿԱՆ ՎԱՐՁԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ

Ղեկավարվելով ''Տեղական ինքնակառավարման մասին'' ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով թիվ 3 մ/մանկապարտեզի և թիվ 5 ն/հիմնարկի տնօրենների դիմումները՝ծնողական վարձը ավելացնելու մասին և հաշվի առնելով, որ երեխաների սննդի կազմակերպման համար նախկին գումարը՝ 2000 /երկու հազար/ դրամը չի բավականացնում, ուստի համայնքի ղեկավարը առաջարկեց 500 /հինգ հարյուր/ դրամով երեխաների ծնողական վարձը ավելացնել.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համաձայնություն տալ թիվ 3 մ/մանկապարտեզ և թիվ 5 նախադպրոցական հիմնարկ հաճախող երեխաների ծնողական վարձը ավելացնելու 500 /հինգ հարյուր/ դրամով և այն դարձնել 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ – 9, դեմ-0, ձեռնպահ - 0

ՎԱԶԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ | ԹԱՐԽԱՆ ԽԵՉՈՅԱՆ

ՆՎԵՐ ԱՐԱՄՅԱՆ | ՆԱՐԻԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ԲԱԼՅԱՆ | ՍԵՎԱԿ ՍԵՎԱՆՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԼԱԶԱՐՅԱՆ | ՎԱՀԱԳՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ՍԱՐՈ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՅՈՒ. ԱՎԱԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Ճամբարակ, 026522255, 026523133, 026561525,
chambarak.gegharquniq@mta.gov.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՄԱՅԻՍԻ 2014թվականի N 15-Ն

### ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՛՛Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին՛՛ Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Ճամբարակ համայնքի 11 բաժնի 1 խմբի 2 դասի ՛՛Պահուստային ֆոնդ՛՛ դասակարգման 4891 ՛՛Պահուստային միջոցներ՛՛ հաշիվը պակասեցնել 150000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամով և այն ուղղել՝
2. 05 բաժնի 4 խմբի 1 դասի ՛՛Փողոցների լուսավորում՛՛ դասակարգման 4269 ՛՛Հատուկ նպատակային նյութեր՛՛ հաշիվը ավելացնել 150000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամով:
3. 08 բաժնի 2 խմբի 1 դասի ՛՛Գրադարաններ՛՛ դասակարգման 4269 ՛՛Հատուկ նպատակային նյութեր՛՛ հաշիվը պակասեցնել 30000 /երեսուն հազար/ դրամով և այն ուղղել 4221 ՛՛Ներքին գործուղումներ՛՛ հաշվին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-9, դեմ-0, ձեռնպահ -0

| | |
|---|---|
| ՎԱԶԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ | ԹԱՐԽԱՆ ԽԵՉՈՅԱՆ |
| ՆՎԵՐ ԱՐԱՄՅԱՆ | ՆԱՐԻԱ ՍԱՐԳՍՅԱՆ |
| ԿԱՐԵՆ ԲԱԼՅԱՆ | ՍԵՎԱԿ ՍԵՎԱՆՅԱՆ |
| ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԼԱԶԱՐՅԱՆ | ՎԱՀԱԳՆ ՍԻՄՈՆՅԱՆ |
| ՍԱՐՈ ԽԱՉԱՏՐՅԱՆ | |

ՔԱՂԱՔԱՊԵՏ Յու.ԱՎԱԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Ճամբարակ, 026522255, 026523133, 026561525, www.chambarakcityhall@rambler.

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

,,19,, մայիսի 2014թ.   N 4

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. ԹԻՎ 3 Մ/ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ԵՎ ԹԻՎ 5 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԾՆՈՂԱԿԱՆ ՎԱՐՁԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3. ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ՝ ՄԱՆԿԱՊԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ, ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21-Ի ՓՈՂՈՑԻ ՎԵՐՋՆԱՄԱՍԻ ԵՎ ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՎԵՐՋՆԱՄԱՍԻ ԱՆՎԱՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՃԱՄԲԱՐԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ　　　　Յու.ԱՎԱԼՅԱՆ